Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 147 - Ա
որոշման

«ՆԱԻՐԻ» ՃԱՄԲԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) կազմակերպում է ամառային անհատույց ճամբար՝ 44-օրյա պատերազմում նահատակված, գերի ընկած, վիրավորված, անհետ կորած հերոսների զավակների, քույրերի և եղբայրների, ինչպես նաև Արցախից տեղահանված երեխաների (7-13 տարեկան, ծնված՝ 2013-2019 թթ.) համար: Ծրագրի նպատակն է երեխաներին պարգևել անմոռանալի և զվարճանքներով լի ամառ: Ծրագրի շրջանակներում երեխաները կանցկացնեն ուրախ և ակտիվ հաճելի ժամանց, բնության գրկում կվայելեն ամառային արձակուրդները, ձեռք կբերեն նոր ընկերներ, ինչպես նաև կծանոթանան հայ ազգային պարերին, կզարգացնեն ստեղծագործելու, մտածելու և նորը ստեղծելու ունակությունները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) (գրանցված՝ ԱՄՆ, Դելավերի նահանգ, Նյու Քեսլ համայնք, 19808 ք. Վիլմինգթոն, Սենթրվիլ փ. 2711, #400 հասցեում, «29» մարտի 1955թ., գրանցման համար՝ 486313)
4.	Ծրագրի կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մելիք-Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 00006479)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Փյունիկ գյուղ, «Ջեփյուռ» ճամբար, սոցիալական

6.	Ծրագրի բյուջեն	126,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	44-օրյա պատերազմում նահատակված, գերի ընկած, վիրավորված, անհետ կորած հերոսների զավակները, քույրերը և եղբայրները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղից տեղահանված 7-13 տարեկան երեխաներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունիսի 8-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 10-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Կոտայքի մարզի Փյունիկ գյուղում նախատեսվում է կազմակերպել ամառային ճամբար: Մասնակից երեխաների համար կազմակերպվելու է էքսկուրսիաներ և արշավներ դեպի հետաքրքիր ու տեսարժան վայրեր: Երեխաներին սովորեցնելու են ձեռքի աշխատանք, խաղալու են սպորտային խաղեր (ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, թենիս), լող, ինչպես նաև կազմակերպվելու է ինտելեկտուալ և ուսուցողական խաղեր: Ճամբարում տեղի է ունենալու հայ ազգային երգ ու պարի միջոցառումներ, ինչպես նաև օրվա ընթացքում երեխաները հնարավորություն կունենան դիտելու իրենց տարիքին համապատասխան մուլտֆիլմեր, ֆիլմեր և ունենալ դրանց վերաբերյալ քննարկումներ: Երեկոյան ժամերին նախատեսվում է կազմակերպել ուրախ և ակտիվ ժամանցային ծրագիր: Ճամբարը կազմակերպվելու է երեք հերթափոխով՝ 1-ին՝ հունիսի 8-17-ը ներառյալ, 2-րդ՝ օգոստոսի 3-12-ը ներառյալ և 3-րդ՝ օգոստոսի 13-22-ը ներառյալ: Յուրաքանչյուր հերթափոխի մասնակցության նվազագույն քանակը՝ 240 երեխա: Երեխաներին տրամադրվելու է երեքանգամյա սնունդ, որը պատրաստվելու է տեղում: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 8-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում՝ 126,000,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ճամբարում երեխաների կեցության և սննդի ձեռքբերման ծառայություններ՝ 126,000,000 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի:
	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական	Չի նախատեսվում:

	ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ